ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հունիսի 2014թ. N_____- Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 561-Ն ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 563-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկը, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասին, 2-րդ մասի 1-ին կետին և 3-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամ կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխա (այսուհետ՝ հաշմանդամ) փոխադրող տրանսպորտային միջոց ղեկավարող անձանց համար սահմանել ավտոկայանատեղի տուրքի վճարման արտոնություն՝ նշված տուրքը վճարելով Երևանի քաղաքային համայնքի բյուջեից:

2. Սահմանել, որ ավտոկայանատեղի տուրքի վճարման արտոնության տրամադրման համար հիմք է հանդիսանում սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը, որին կցվում են հաշմանդամի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի որոշման, ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի, վարորդական իրավունքի և օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

3. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» N 561-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 1-ին կետը լրացնել նոր՝ 4-րդ ենթակետով, հետևյալ բովանդակությամբ՝

«4) Վճարովի ավտոկայանատեղերում նախատեսել առանձին հատվածներ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամի կարգավիճակ ունեցող երեխա տեղափոխող ավտոտրանսպորտային միջոցների կայանման համար: Նշված ավտոտրանսպորտային միջոցների հասանելի տեղերի տրամադրման կարգը, ինչպես և հասանելիություն

որտեղ սույն կարգին համապատասխան կազմակերպվում է վճարովի ավտոկայանատեղեր, նախատեսել 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամի կարգավիճակ ունեցող երեխա տեղափոխող առնվազն 1 (մեկ) ավտոտրանսպորտային միջոցի կայանման համար հատված»:

2) որոշման 6-րդ կետի 4-րդ ենթակետը «Վճարովի ծառայություններ» բառերից հետո լրացնել «, իսկ սույն կարգի 1-ին կետի 4-րդ ենթակետում նշված հատվածներում՝ «Հաշմանդամներ»» բառերը:

4. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանելու մասին» N 563-Ն որոշման հավելվածի 4-րդ կետը լրացնել նոր՝ 4-րդ ենթակետով, հետևյալ բովանդակությամբ.

«4) ավտոկայանատեղերին անմիջապես հարակից տարածքում տեղադրված վճարումների ընդունման տերմինալների միջոցով: Ընդ որում՝ յուրաքանչյուր ավտոկայանատեղի համար վճարումների ընդունման տերմինալի տեղը սահմանում է Երևանի քաղաքապետը:»:

4. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևանի քաղաքային համայնքում տեղական տուրքերի 2014 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 89-Ն որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետի գ/ պարբերությունում «5 րոպե» և «5 րոպեից» բառերը փոխարինել համապատասխանաբար «15 րոպե» և «15 րոպեից» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 561-Ն ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 563-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետին ուղղված հաշմանդամների և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի բազմաթիվ դիմումներով ու գրություններով առաջարկվել կամ խնդրվել է ավտոկայանատեղի տուրքի վճարման արտոնություն սահմանել հաշմանդամների համար, ինչպես նաև ավտոկայանտեղերում նախատեսել վերջիններիս համար հատուկ հատվածներ:

<Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ տեղական տուրքի և (կամ) տեղական վճարի արտոնություններ համայնքի ղեկավարի ներկայացմամբ կարող է սահմանել համայնքի ավագանին՝ տեղական տուրք կամ վճար վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարելով տեղական տուրքը կամ տեղական վճարը:

Հաշվի առնելով վերոգրյալ օրենքով Երևանի քաղաքապետին վերապահված տուրքի վճարման արտոնություն սահմանելու առաջարկ ներկայացնելու լիազորությունը և Երևան քաղաքի ավագանուն վերապահված՝ նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունելու լիազորությունը, ինչպես նաև հաշվի առնելով հաշմանդամների կարգավիճակը, առաջարկվում է վերջիններիս համար սահմանել տուրքի վճարման արտոնություն:

Բացի այդ, առաջարկով նախատեսվում է «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 561-Ն որոշման մեջ կատարել լրացումներ՝ ապահովելով ավտոկայանատեղերի մատչելությունը հաշմանդամների համար: Նախագծով առաջարկվում է վճարովի ավտոկայանատեղերում նախատեսել համապատասխան նշաններով ապահովված առանձին հատվածներ հաշմանդամների համար՝ պայմանավորված վճարովի ավտոկայանատեղերում հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձ կամ երեխա փոխադրող վարորդների համար առանձնացված տեղերի խիստ սակավությամբ և այդ խնդրի գործնական և իրավական կարգավորման անհրաժեշտությամբ:

Երևանի բնակչության, հասարակական կազմակերպությունների կողմից ստացվել են նաև բազմաթիվ դիմումներ՝ կապված ավտոկայանատեղում անվճար կայանելու համար սահմանված 5 րոպե ժամկետն երկարաձգելու խնդրանքով:

Ավտոկայանատեղի կազմակերպման, ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա հետ կապված այլ հարցերի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովում կազմակերպված հանրային քննարկումների ընթացքում նշված հարցերի կարգավորման անհրաժեշտության հարցը բարձրացվել է նաև ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից, որի ընթացքում Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների կողմից առաջարկվել է խնդրի կարգավորման վերը և ստորև նշված տարբերակները, որոնք ընդունելի են համարել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավտոկայանատեղի տուրք վճարողներ են հանդիսանում ոչ միայն Երևանի քաղաքային համայնքի բնակիչները, այլ նաև ՀՀ մարզերից և այլ պետություններից մայրաքաղաք ժամանած այլ համայքների բնակիչները և զբաստոշրջիկները, որոնց համար որոշակի դժվարություններ կարող է առաջացնել 5 րոպե անվճար կայանելու ընթացքում տուրքի վճարման հարցը /ինչը հաճախ

պայմանավորված է օրենսդրության և Երևան քաղաքի ավագանու որոշումների պահանջներին չտիրապետելու հետ/, առաջարկվում է ոչ միայն ավտոկայանատեղում անվճար կայանման ժամանակահատվածը դարձնել 15 րոպե /ինչն էստ էության հարցի արմատական լուծում չէ/, այլ նաև տուրքի վճարումն ավելի դյուրին դարձնելու համար լրացում կատարել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 563-Ն որոշման մեջ՝ որպես վճարման եղանակ նախատեսելով նաև վճարումների ընդունումը ավտոկայանատեղերում տեղադրվող տերմինալների միջոցով:

Վերը նշված խնդիրների համալիր լուծման պահանջից ելնելով սկզբունքային պայմանավորվածություն է ձեռք բերվել Երևանի քաղաքապետարանի և <Փարկինգ սիթի սերվիս> ՓԲԸ-ի միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում՝ ավտոկայանատեղերին անմիջապես հարակից տարածքում՝ մայթի վրա, որոշակի խտությամբ վճարումների ընդունման տերմինալներ տեղադրելու հարցում, որը է՛լ ավելի հարմարավետ և մատչելի եղանակ է ավտոկայանատեղի տուրքի վճարման համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 561-Ն ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 563-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ավտոկայանատեղի տուրքի վճարման արտոնություն սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 561-Ն և դեկտեմբերի 25-ի N 563-Ն որոշումներում լրացումներ, 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 89-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ անհրաժեշտություն է առաջանում ընդունել Երևան քաղաքի ավագանու որոշումներ՝ որոշակի թվով անձանց համար ավտոկայանատեղի տեղական տուրքի վճարման արտոնություն սահմանելու մասին:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 561-Ն ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 563-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ավտոկայանատեղի տուրքի վճարման արտոնություն սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 561-Ն և դեկտեմբերի 25-ի N 563-Ն որոշումներում լրացումներ, 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 89-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2014թ. բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվում են փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ